



ԴԻՄՈՒՄԻ ՁԵՎ

ՀԵՌԱՎԱՐ ԵՂԱՆԱԿՈՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԴԻՄՈՐԴԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ

«Հայաստանի Հանրապետության
փաստաբանական դպրոց» հիմնադրամի
Ընդունելության հանձնաժողովին

Անուն, հայրանուն, ազգանուն

Հաշվառման հասցե

Հեռախոսահամար

Էլեկտրոնային հասցե

ԴԻՄՈՒՄ

(հեռավար եղանակով ուսուցման դիմորդի)

Խնդրում եմ թույլատրել ինձ մասնակցել «Հայաստանի Հանրապետության փաստաբանական դպրոց» հիմնադրամի (այսուհետ՝ ՀՀ փաստաբանական դպրոց) կողմից հայտարարված ընդունելության քննություններին՝ որպես **հեռավար (դիստանցիոն, առցանց) եղանակով ուսուցման դիմորդ**:

Ընդունելության քննությունները հանձնելու և ընդունվելու դեպքում՝ ուսուցմանը մասնակցելու նպատակով ընտրում եմ հետևյալ մասնագիտացումը՝

նշել՝ (1) քրեաիրավական կամ (2) քաղաքացիաիրավական (վարչաիրավական)

Ծանոթացել եմ ՀՀ փաստաբանական դպրոցի կանոնադրությանը, ՀՀ փաստաբանական դպրոցի կառավարման խորհրդի 31.05.2022թ. թիվ 7/1-Լ որոշմամբ հաստատված Ընդունելության քննությունների կազմակերպման և անցկացման կարգին, ՀՀ փաստաբանական դպրոցի տնօրենի որոշմամբ հաստատված՝ ընդունելության գործընթացի ժամանակացույցին, Ընդունելության հանձնաժողովի գործունեության կարգին:

Հավաստում եմ, որ համակարգչից օգտվելու իմ գիտելիքները (առնվազն՝ MS Word, Excel, PowerPoint) բավարար են ընդունելության քննություններին մասնակցելու, ինչպես նաև ընդունվելու դեպքում՝ ՀՀ փաստաբանական դպրոցում ուսուցում անցնելու համար:

Տեղեկացված եմ, որ ընդունելության գրավոր քննության ընթացքը (այդ թվում՝ համակարգիչները) տեսանկարահանվելու և տեսաձայնագրվելու է, գրավոր քննության ընթացքն առցանց (օնլայն (on-line)) հեռարձակվելու է, իսկ քննական սրահներում և դրան հարակից տարածքներում կարող է տեղադրված լինեն տեխնիկական միջոցների խլացուցիչ սարքեր:

Հավաստում եմ, որ հայերենին տիրապետող գործունակ ֆիզիկական անձ եմ և իմ մասով առկա չեն «Փաստաբանության մասին» օրենքի 45.6-րդ հոդվածով սահմանված ունկնդրի կարգավիճակը բացառող պայմանները:

Իրազեկված եմ, որ ընդունելության քննության գործընթացից բխող հարցերով ծանուցումները, որոշումները և այլ փաստաթղթերը (այդ թվում՝ շտեմարանը) տեղադրվելու են ՀՀ փաստաբանական դպրոցի կայքէջում (www.advschool.am կամ www.advocates.academy) կամ ուղարկվելու են սույն դիմումի մեջ իմ նշած էլեկտրոնային հասցեին, ինչը համարվելու է պատշաճ ծանուցում:

Հատուկ (օժանդակ) հարմարությունների կարիք ունենալու դեպքում նշել կարիքի բնույթը:

Դիմումին կից ներկայացնում եմ՝ (շրջանակի վրա կատարել նշում՝ V)

- սահմանված ձևի ինքնակենսագրական տվյալների թերթիկ.
- անձը հաստատող փաստաթղթի պատճենը.
- 3x4 չափի 2 (երկու) լուսանկար կամ լուսանկարի սկան.
- բարձրագույն իրավաբանական կրթություն ստացած լինելը հավաստող ավարտական փաստաթղթի պատճենը **կամ** բուհից տրված տեղեկանքի բնօրինակը (**ընդգծել ընտրված տարբերակը**).
- ընդունելության քննության մասնակցության վճարի անդորրագրի պատճենը կամ վճարից ազատելու մասին դիմումը.
- դատվածության վերաբերյալ տեղեկանքը **կամ** նշված տեղեկանքը ստանալու մասին լիազորագիրը (**ընդգծել ընտրված տարբերակը**).
- տեղեկանք առ այն, որ հեռավար դիմորդը վերջին մեկ տարին, այդ թվում՝ դիմելու պահին, Երևան քաղաքից առնվազն 80 (ութսուն) կմ հեռավորության վրա է փաստացի բնակվում (եթե հաշվառման հասցեն տարբերվում է փաստացի բնակության վայրի հասցեից).
- այլ փաստաթղթեր (նշել).

_____:

Սույնով տալիս եմ իմ համաձայնությունը ՀՀ փաստաբանական դպրոցին ներկայացված փաստաթղթերի և տեղեկությունների արժանահավատությունը պարզելու նպատակով անհրաժեշտության դեպքում հարցումներ կատարել պետական և ոչ պետական մարմիններին (կազմակերպություններին) և ստանալ դրանց պատասխանները, այդ թվում՝ ինձ վերաբերող անձնական տվյալները:

(ստորագրություն)

« _____ » _____ 202__ թ.
(օր,ամիս, տարեթիվ)